ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

14.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ՍՑ-ԱՄ-2018/118

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.07.2018թ. թիվ 04/26-3/13807-18 գրությամբ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 30.07.2018թ. թիվ 01/13.1/1390-18 գրության հիման վրա, 31.07.2018թ. թիվ 04/26-3/13807-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «ԳԱՎԱ» ՍՊԸ-ին (այսուհետ՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ԳԱՎԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԳԱՎԱ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/118 ընթացակարգի շրջանակներում 03.08.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.07.2018թ. թիվ 01/13.1/1390-18 գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված՝ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով շինարարական նյութերի և այլ հարակից արտադրանքի գնման ընթացակարգի շրջանակում 15-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «ԳԱՎԱ» ՍՊԸ-ն հրաժարվել է տվյալ չափաբաժնով իր հետագա մասնակցությունից, քանի որ գնային առաջարկը սխալ է ներկայացրել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/118 ընթացակարգի շրջանակներում 03.08.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է որ Ընկերությունը առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո գրությամբ դիմել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հայտնելով, որ իր կողմից ներկայացվել է տասն անգամ ցածր գնային առաջարկ, ուստի Ընկերությունը չի կարող շարունակել իր հետագա մասնակցությունը ընթացակարգին:

4. ՍՑ-ԱՄ-2018/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար շինարարական նյութերի և այլ հարակից արտադրանքի ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԳԱՎԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ն ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով չի ներկայացրել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված N 6.1-ը, Ընկերության կողմից ներկայացվել է գրություն, համաձայն որի Ընկերության գնային առաջարկը տվյալ չափաբաժնի համար սխալ է և Ընկերությունը առաջարկված գնով չի կարող իրականացնել մատակարարում:

Նույն արձանագրության համաձայն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշվել է «ԳԱՎԱ» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել 15-րդ չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 6.1-ը:

4. «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 23.07.2018թ. գրությամբ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ն հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, քանի որ իր կողմից ներկայացվել է սխալ գնային առաջարկ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ի մասնակցությունը Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով դադարեցվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.07.2018թ. թիվ 04/26-3/13807-18 գրությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 30.07.2018թ. թիվ 01/13.1/1390-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 -րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ

կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար շինարարական նյութերի և այլ հարակից արտադրանքի ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԳԱՎԱ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է առաջին զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը,

արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ն ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին 13.07.2018թ. ծանուցվել է հավելված թիվ 6-ը և 6.1-ը ներկայացնելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով չի ներկայացրել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված N 6.1-ը: Միևնույն ժամանակ Ընկերության կողմից ներկայացվել է գրություն, համաձայն որի Ընկերության գնային առաջարկը տվյալ չափաբաժնի համար սխալ է և Ընկերությունը առաջարկված գնով չի կարող իրականացնել մատակարարում:

Նույն արձանագրության համաձայն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշվել է «ԳԱՎԱ» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել 15-րդ չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 6.1-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 23.07.2018թ. գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի 15-րդ չափաբաժնով «ԳԱՎԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սխալ գնային առաջարկի արդյունքում հնարավոր չէ շարունակել այդ չափաբաժնով գնման գործընթացը:

Նույն գրությամբ Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին առաջարկել է վերոհիշյալ չափաբաժնի մասով մերժել Ընկերության հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ի մասնակցությունը Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով դադարեցվել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով պարտավորվել է առաջին զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Դրա հետ մեկտեղ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով՝ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ի կողմից «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, փոխարենը Ընկերությունը 16.07.2018թ. թիվ 071 և 23.07.2018թ. թիվ 075 գրություններով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ 15-րդ չափաբաժնով «ԳԱՎԱ» ՍՊԸ-ի ներկայացրած սխալ գնային առաջարկի արդյունքում հնարավոր չէ շարունակել այդ չափաբաժնով գնման գործընթացի հետագա մասնակցությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ն «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «գ» ենթակետերի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.07.2018թ. թիվ 04/26-3/13807-18 գրությամբ «ԳԱՎԱ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05018568) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԳԱՎԱ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**